ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Ε/13/97-21 առ "20" 01 2021թ.

Ձեր _____ առ "___" _____ 2021թ.

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ պրն. Հ. Թագեսյանին
E-mail: taggem@mail. r u

[№01/289 առ 14.09.2020թ. պայմանագրի
միակողմանի մասնակի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Թագեսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար *լաբորատոր, չափիչ, հսկիչ, սրուգիչ սարքերի, գեներատորի կռունկային կշեռքի* (այսուհետ՝ ապրանքներ) ձեռք բերման նպատակով 2020թ. հուլիսի 23-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-97/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. սեպտեմբերի 14-ին կնքվել է թիվ 01/289 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 4,102,600 (չորս միլիոն մեկ հարյուր երկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 2-րդ չափաբաժնով սահմանված 1 հատ Unigram KB-30T տեսակի կշեռքը, որի ընդհանուր գինը կազմում է 2983800 (երկու միլիոն ինը հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել տվյալ ապրանքի բաղկացուցիչ մաս կազմող ինֆրակարմիր հեռակառավարման վահանակն ու լրացուցիչ մարտկոցը:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

- 2.1.3 կետի համաձայն, եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

  բ) <<Գնորդը պարտավոր է հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

- 2.1.7 կետի <<Գնորդը պարտավոր է միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի հետ 2020թ. սեպտեմբերի 14-ին կնքած թիվ 01/289 պայմանագիրը 2-րդ չափաբաժնի մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվի նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրենի ժ/պ՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ ԳԲ 2-րդ կարգի մասնագետ՝
Կ. Համբարձումյանը,
+374 10 28 – 29 - 60